

Տնական ձագարնոցները պատերէն զատ պէտք է ամուր ծածք ալ ունենան վրանին, որպէս զի թէ գէշօդերէն և թէ մնասակար կենդանիներէն ազատ մնան. յատակը պէտք է նախ աղիւսով պատել, ու ետքը վրանմէկուկէս կամերկու մեթր հողլեցընել, պատերուն հիմն ալնոյնչափ խոր պէտք է ըլլայ: Տեղ տեղ ամուր տախտըկէ խղիկներ շինելու է մէկ մեթր մեծութեամբ. ասխղիկներուն յատակը պէտք է քիչ մը դարվեր ըլլայ ու ան դիրքով շինած որ մէջը օդքանի:

### Լինդանէայ բաժանումը :

Ա, ԱԽԸՆԹԱՑ յօդուածին մէջ՝ ցըցուցինք ողնաւոր կենդանեաց ընդհանուր բաժանմունքը. հիմա գանք ան կենդանիներուն, որ իրարմէ թէպէտ շատ տարբերութիւն ունին՝ բայց ողնաւոր չեն: Ի՞տենով այլ և այլ բնագէտներ անոսկը կենդանիներուն ներքին և արտաքին յատկութիւնները նայելով՝ զանազան բաժանմունքներ ըրին: Ի՞սկինը եղաւ լ ամարք բնագէտը որ աս անոսկը կենդանիները իրենց ջղերուն ու մարմնոյն կազմուածքին նայելով՝ երկու ցեղ բաժնեց, այսինքն անզգայ և զգայուն: Ի՞նզգաններուն կարգը սեպէց ջրածնիները<sup>2</sup>, պողիպողները, ձառագայթաւոր՝ կենդանիները, և որդերը. իսկ զգայուններուն կարգը դրաւ միջանները, սարդերը, խեցեմորթները, օղակաւորները, հերոտունքը և կակամիները: Քիւլիկ բնագէտը տեսնելով որ կենդանիներուն աս բաժանմունքը ձիշդ չէ, ինքն ալ բոլոր ողնայար չունեցող կենդանեաց ազգը իրեք դաս բաժնեց. այսինքն կակամիս, յօդաւոր և ձառագայթածեւ:<sup>1</sup> Այս թէպէտ աս բաժան-

մունքն ալ խիստ ձիշդ չէ, ու շատ անգամ կենդանիներուն իրարու հետ ունեցած կապակցութիւնը կը կտրի, որով անկարելի կ'ըլլայ բոլոր կենդանինեաց՝ այսինքն մարդէն սկսեալ ինչուան խիստ մանր ու անկատար կենդանիներուն իրարու հետ ունեցած կապակցութիւնը ցուցընել, բայց հիմակուան նոր բնագէտները գոհ կ'ըլլան որ բոլոր գործարանաւոր էակներուն այնպիսի դասաւորութիւն մը տան՝ որով անոնց իրարու հետ ունեցած կապակցութիւնը ընդհանրապէս պարզ երենայ: Բոլոր արարածները իրարու հետ կապելու համար՝ շատ գժուարութիւններ ելած են, բայց ասոր պատճառն ան է որ երկիրս այլ և այլ փոփոխութեանց տակ իյնալով շատ կենդանիներ ցեղով կորսուած են. որով մնացած կենդանիներուն ձիշդ կապակցութիւնը չենք գտներ:

Դանք հիմա կենդանեաց երկրորդ խումբին վրայ:

### ԽՈՒՄԲ ԵՐԿՐՈՐԴ

#### Լակամիս էնդանիք :

ԼԱԿԱՄԻՍ կենդանիները անմիջապէս ողնաւոր կենդանիներէն ետքը կուգան. վասն զի ասոնք իրենց շնչառութեամբը և իրենց մարմնոյն հիւթերուն ու արեան շրջանովը և զգիքներովը միջատներէն աւելի կանոնաւոր են:

Լակամիսները ոչ սոկոր ունին, ոչ ողնայար՝ այսինքն կոնըկի ոսկոր, և ոչ յօդաւոր կենդանեաց պէս իրենց մարմինը իւրաքանչիւր յօդուածներուն յարմար կեղեւ ունի վրան, հապա կամ ամբողջ կամկէս մը խեցիով մը պատած է: Ի՞սոնք սաստիկ ջղոտ են. արիւնին ձերմակ կամքիչ մը կապուտի կը զարնէ. իրենց արեան շրջանը ամբողջ է, սրտերնին մեծկակ, և երկու մեծ երակ ալ ունին. իսկ իրենց շնչառութեան կերպը տարբեր է:

<sup>1</sup> Տես երես 36

<sup>3</sup> Գլ. Radiaires.

<sup>2</sup> Գլ. Infusoires.

<sup>4</sup> Գլ. Rayonnée.

Կակղամիները վեց դաս և տասնուհինգ կարգ կը բաժնուին . յ

ԴԱՍ Ա .	Գլխոսունք	Céphalopodes.
ԴԱՍ Բ .	Թևոտունք	Ptéropodes.
ԴԱՍ Գ .	Թողաւորք Փնջականջք	Pulmonés. Nudibranches.
ՈՐՈՎԱՅՑՆ . ՈՏՈՒՆՔ <sup>1</sup>	Ներքնականջք Այլոտունք Ծածկականջք Սանտրականջք Փողականջք Վահանականջք Բոլորականջք	Inférobranches. Hétéropodes. Tectibranches. Pectinibranches. Tubulibranches. Scutibranches. Cyclobranches.
ԴԱՍ Դ .	Խեցեմորթք Անխեցիք	Acéphales testacés. Acéphales sans coquille.
ԴԱՍ Ե .	Բազկոտունք	Brachiopodes.
ԴԱՍ Զ .	Հերոտունք	Cirripedes.

Դաս Ա . Գլխոտունք :

Մյուն 8 մարմինը պարկի նման է , և մէջը ձկան ականջի պէս բլթակներ կան . աս պարկին մէջէն գլխի պէս բան մը կ'ելլէ՝ չորս դին պսակաձե բլթակներով կամ մազմզուկներով . կենդանին ասօնցմով կը քալէ և ուզած բաները կը բռնէ : Մյոնք կակղամիս կենդանեաց մէջ ամենէն կատարեալ գործարան ունեցողները կը սեպուին . Շատը կան որ մասնաւոր սե հիւթ մը դուրս կուտան ուզած ատենին . և իրենց կեցած տեղին չորս դին պատած ջուրը ներկելով թշնամիին աշքէն կ'ազատին աներեսոյթ կ'ըլլան :

Դաս Բ . Ունոտունք :

Մյուն 8 մարմինը պատեան չունի , և իրենց գլխուն վրայ մանր բլթակ կամ մազմզուկ չերեւնար . թէ որ ունին նէ ալ՝ խիստ մանր են : Գլխաւոր շարժման գործարանքնին երկու հատ մաշկային թեւեր են երկու կողմերնին , իրենց վզին մէջտեղէն ելած , և ասոնց վրայ է իրենց շնչառութե գործարանը :

1 գլ . Gastéropodes.

2 գլ . Acéphales.

Դաս Գ . Որովայնութունք :

Մյուն 8 գլուխն ալ բաւական որոշ կը տեսնուի . սողալու ատենին փորերնին գետինը կը քսեն : Ո՞եծ մասը ամենեւին պատեան չունին , ոմանք ալ խեցիով մը պատած են : Ոմանք հասարակ օդով շունչ կ'առնեն , և թոքի պէս բան մը ունին . կան ալ որ իրենց շնչառութիւնը ջրով է , և իրենց ականջներուն դիրքն ալ տարբեր է :

Դաս Դ . Խնդըւնք :

Մյուն 8 վրայ որոշ գլուխ չերեւնար . բերաննին իրենց պատենին տակը ծածկուած է , որ գրեթէ միշտ երկու կը քացուի , և անոր մէջ է նաև իրենց ականջը , ընդերքը , աղիքը ու մարմնոյն բոլոր մէկալ կտորները . գրեթէ ամէն անդլուխ կենդանիներկը քացիկ խեցիի մէջ են , ինչպէս ոսարէները : Մյու դասը երկու կարգ կը բաժնուի . յ խեցեմորթ և անխեցի :

Դաս Ե . Բաղկոտունք :

Մյուն Ք անգլուխներուն պէս երկու բլթակ կ'ունենան , որոնց ներսի դին թերթ թերթ է ձկան ականջի պէս : Իրենց խեցին երկու կը քացուի , բայց չարժիր . ուստի կերակուրնին իրենց պղտիկ՝ կակուղ ու մնոտ ոտուրներով կը բռնէն , և ուզած ատենին աս ոտուրները դուրս կը հանեն կամ իրենց խեցիներուն մէջ կ'ամփոփեն :

Դաս Զ . Հերոտունք :

Մյու կակղամիս կենդանիներն ալ մէկալնոնց պէս մաշկ ու ականջներ ունին , աս տարբերութեամբ որ փորերնուն վրայ զյուգ զյուգ մազմզուկներ կան : Մյու մազմզուկները յօդաւոր ու շարժուն են :

Այսկամիսները խիստ շատուոր են, թէպէտև մարդուս այնչափ պիտանի չեն. շատը կ'ուտուին, բայց դժուաւարամարս են: Այսկի գործածականներն են՝ ոստրէները և խեցիները. Յունաստանի ու Իտալիայի մէջ աւելի յարգի են պողիպոդներն ու սեպիաները<sup>1</sup>. նմանապէս տեսակ տեսակ խղունջները<sup>2</sup> մէկ քանի երկիրներ խիստ յարգի են: Պլինիոս կը պատմէ թէ հին ատենը հռոմայեցիք ալ աս կենդանիները աւազանի մէջ կըպահէն եղեր՝ իբրև կերակուրի պաշար: Այսկամիսներէն ոմանք մարդկանց հարստութեան ու զարդարանքի պատճառ կ'ըլան իրենց աղուոր մարդիտներովն ու սատափներովը՝ ոմանք ալ գեղեցիկ ներկ կ'ունենան որ գոյնը ամենեին չնետեր, և գործածեն ալ դիւրին է. ինչպէս է Ծինութանաքը, սեպիան, ծովու ծիրանին, և այն:

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՄԴՈՒԹԻՒՆ

Դանդեղին օգուաներն ու գործածութենք:

Դակութեցին մեծ օգուան է իրեն տակին շաքարը<sup>3</sup>, անկէ զատ՝ կենդանեաց համար ալ աղէկ ուտելիք է: Կատ տեսակ հողերու մէջ կրնայ առաջ գալ, քիչ ծախքով կըմշակուի, և հումը գետնախնձորէն աւելի առողջարար է. ստեպինի<sup>4</sup> ու շողգամի հետ ալ բաղդատելով աս աղէկութիւնս ունի որ անսնց չափ հոգ չուզեր. երկար ատեն կըպահուի առանց աւրուելու, և աղէկ տեսակին մննդարար հիւթը գետնախնձորին հաւասար է, ու ասոր չափ կենդանիները

<sup>1</sup> Միւրէտէպապաւու: <sup>2</sup> Սայլանէնու: <sup>3</sup> Տես օրագրիս 27 երեսը: <sup>4</sup> Հաւուամ:

գիրցընող ուրիշ բանջար չկայ: Ո՞հայն փորձով տեսնուեր է որ կաթնտու կովերուն համար այնչափ աղէկ չէ. բայց թէ որ գետնախնձորի հետխառն տրուի՝ որ և իցէ կենդանեաց ալ շատ ախորժելի ու օգտակար է:

Դակնդեղին օգուտներէն մէկն ալ աս է որ իր փոշին խահուէի տեղ կը գործածուի: Տերեները աղէկ ուտելիք են անասնոց, և որչափ որ տերեները կտրես, արմատը նորէն տերեկուտայ: միայն թէ քանի որ գետակը մեծնալու վրայ է՝ պէտք չէ կըտրել, չէ նէ շաքար տուող հիւթը քիչ կ'ըլլայ. ուստինայելու որ ամառուան մէջ չփրցուի, հապա երբոր տակերը հողէն կըհանես՝ ան ատեն փրցուր տերեները: Ուէ որ խիստ շատ են, ու անասունները մէկէն չեն կրնար ուտել հատցընել, տակառներու մէջ կոխէ, կարգ մը տերև՝ կարգ մը աղդնելով, և ուրիշ ատենի համար պահէ. կրնաս նաև պարարտութեան տեղ հողուն մէջ թաղել: Խսկ թէ որ միայն անասնոց տալու համար մշակես, տասնուհինկ օրը մէյմը կրնաս տերեները փրցընել, մանաւանդ թոռմածները:

Ո՞շակէլուն հերպը:

Դակնդեղին մշակելուն կերպը շատ դիւրին է. ամէն տեսակ հողի մէջ կը բուսնի, բայց աւելի կըսիրէ թեթև, կակուղ, խոր, ու անտառի սե հողերով խառնուած երկիրները, ինչպէս են գետի մօտ եղած տեղուանք: Աւազոտ հողերուն մէջ տակերը շատ չեն մեծնար, բայց շաքարի հիւթը առատ կ'ըլլայ. սաստիկ կրոտ՝ կաւոտ ու կալչուն հողերը ամենեին չսիրեր: Վիչ խորութիւն ունեցող հողերուն օգուտն աս է որ տակերը դիւրաւ կրնաս հանել: Բնդհանրապէս ցորենի արտերը որ շատ կաւոտ չեն, և հաճարի արտերը որ ոչ կրոտ ու ոչ խիստ ցամաք են՝ ճակնդեղին աղէկ կըյարմարին: